

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-02/22**

ք. Երևան

«07» 02 2022 թ.

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ն, ի դեմս խորհրդի նախագահ Արա Շիրինյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Արթուր Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների տեխնիկական ստուգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան:

1.3 Ծառայությունները Կատարողի կողմից մատուցվում են միայն Պատվիրատուի կողմից գրավոր կարգով Կատարողին ներկայացված պատվերի (Պատվիրատուի աշխատակազմի ղեկավարի ստորագրությամբ) հիման վրա՝ Պատվերը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

**2.4.2** Պարանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված

~~արժեքը և տարաձևերը:~~

**2.4.3** Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման ~~ամսաթվա~~ գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված Z աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը **չի կարող գերազանցել 1,380,000.0 (մեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության և համապատասխան հաշվի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxՃԾԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

1.4 ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

1.5 մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

2.1 մատուցված ծառայության քանակն է:

Ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը (ՄԳ) (ներառյալ՝ ըստ առանձին ծառայությունների) և ծառայության մատուցման համար հրավերով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը (ՆԳ), ինչպես նաև հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ) սահմանվում են սույն Պայմանագրի Հավելված 4-ով:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տուգանք՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՍՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, քրիզերը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակցից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

աստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը պայտանի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հանրային հեռարձակողի խորհրդի  
աշխատակազմ» ՊԸ  
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական  
վարչություն  
Հ/Հ 900011430163  
ՀՎՀՀ 01539597

խորհրդի նախագահ՝ Ա. Շիրինյան



**ԿԱՏԱՐՈՂ**

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ  
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31  
Արարատ Բանկ

Հ/Հ 1510012745550100  
ՀՎՀՀ 00873228



Table with multiple columns and rows, containing faint text and possibly a grid structure. The text is mostly illegible due to fading.

«ՕԴ» Հավելված  
2022 թ. կերպով  
ՀՀՏԽԼ-ԳՀԾՁԲ-02/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՒՅՑ

ՀՀ դրամ

		Ծառայության			մատուցման	
հրավերով նախատեսված ածխաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը
1	71631120/501	4x4 տիպի Շկրոլե-Նիվա և BMW 523i մակնիշի ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ (Ծառայությունների գնումները գտնվում են Հավելված 4-ում)	դրամ	ծառայության գինը չի կարող գերազանցել 1,380,000.0 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն	1	ՀՀ, ք. Երևան, Ռոբիդյանց փ. 31, ք. Երևան Արշակունյաց 119/12, ք. Երևան Նոր Նորք, նոր թաղամաս 1-ին նորանցք 58/2  Պայմանագիրը ուժի մտնելու օրվանից մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հանրային հեռաձևերի խորհրդի աշխատակազմ» ՊՀ  
 ք. Երևան, Ալեք Մանուկյան 5  
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
 ՀՀ 900011430163  
 ՀՀ 01539597



**ԿԱՏԱՐՈՒ**

«ՖԻԵՆ Մոտոր» ՍՊԸ  
 ք. Երևան, Ռոբիդյանց փ. 31  
 Արարատ Բանկ  
 ՀՀ 1510012745550100  
 ՀՀ 00873228





Պայմանագրի կողմ  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴԻԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ \_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « \_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով սպայմանագրի կատարման վերաբերյալ « \_\_\_\_ » « \_\_\_\_ » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ սպայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ սպայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց  
\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց  
\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

**ԱԿՏ N**  
 պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) մինչև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
 նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

\_\_\_\_\_ և \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_ և \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

**ատուցվելիք ծառայության տեսակները, ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը (ՄԳ) (ներառյալ՝ ըստ առանձին ծառայությունների), ծառայության մատուցման համար հրավերով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը (ՆԳ) և հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Մ)**

Ավտոմեքենաների տեխնիկական ստուգման՝ SU-1(տեխնիկական զննման /դիագնոստիկա/), SU-2 (վերանորոգման), ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/ 4x4 տիպի Շևրոլե-Նիվա 1 հատ, և BMW 523i 1 հատ

Չափաբաժինը՝ 1

SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները՝

Հ/Հ	Ծառայության տեսակներ	Тип услуги	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Մ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ			
			4x4 տիպի Շևրոլե-Նիվա		BMW 523i	
			Թվերով /ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ	Տառերով	Թվերով /ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ	Տառերով
	<b>SU-1 ներառվող ծառայությունների անվանում՝</b>	<b>Наименования услуг, включенных в ТО-1</b>				
1	Բռնկման համակարգի ստուգում	Проверка системы зажигания	2,522	երկու հազար հինգ հարյուր քսաներկու	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
2	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	Проверка работы передних и задних подвесок	2,522	երկու հազար հինգ հարյուր քսաներկու	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
3	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	Проверка работы электронной системы	2,522	երկու հազար հինգ հարյուր քսաներկու	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
4	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	Проверка качества и уровня масел различных агрегатов	841	ութե հարյուր քառասունմեկ	841	ութե հարյուր քառասունմեկ
3.2	<b>SU-2 ներառվող ծառայությունների անվանում</b>	<b>Наименования услуг, включенных в ТО-2</b>				
1	Շարժիչի հանում և տեղադրում	Снятие и установка двигателя	16,815	տասնվեց հազար ութ հարյուր տասնհինգ	38,924	երեսունութ հազար ինը հարյուր քսանչորս
2	Շարժիչի վերանորոգում	Ремонт двигателя	42,038	քառասուն երկու հազար երեսունութ	77,848	յոթանասունյոթ հազար ութ հարյուր քառասունութ
3	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	Снятие и установка подушки двигателя	1,682	հազար վեց հարյուր ութսուներկու	5,885	հինգ հազար ութ հարյուր ութսունհինգ
4	Բ/լիստեղի կափարիչի հանում և տեղադրում	Снятие и установка крышки распределительного вала	1,682	հազար վեց հարյուր ութսուներկու	8,408	ութե հազար չորս հարյուր յոթ
5	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	Снятие и установка головки блока двигателя	8,408	ութե հազար չորս հարյուր ութ	15,570	տասնհինգ հազար հինգ հարյուր յոթանասուն
6	Շարժիչի հիդրոհրիչների փոխարինում	Замена гидравлики двигателя	18,000	տասնութ հազար	25,000	քսանհինգ հազար
7	Վերևի կափարիչի միջադիրի փոխարինում	Замена прокладки верхней крышки	17,000	տասնյոթ հազար	25,000	քսանհինգ հազար
8	Ծնկածն լիստեղի առջևի խցուկի փոխարինում	Замена переднего сальника коленчатый валы	19,000	տասնինը հազար	25,000	քսանհինգ հազար
	<b>Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>					
9	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	Замена масла и масляного фильтра	389	երեք հարյուր ութսունինը	389	երեք հարյուր ութսունինը
10	Ղեկավարման բլոկի վերանորոգում	Ремонт блока управления	8,408	ութե հազար չորս հարյուր ութ	21,019	քսան հազար տասնինն
11	Օդի զտիչի փոխարինում	Замена воздушного фильтра	841	ութե հարյուր քառասունմեկ	1,682	հազար վեց հարյուր ութսուներկու
12	Սրահի զտիչի փոխարինում	Замена внутреннего фильтра			1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու

Հ/Հ	Ծառայության տեսակներ	Тип услуги	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Մ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ			
			4x4 տիպի Շևրոլե-Նիվա		BMW 523i	
			Թվերով /ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ	Տառերով	Թվերով /ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ	Տառերով
13	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	Замена форсунок инжектора	3,892	երեք հազար ութ հարյուր իննսուն երկու	3,892	երեք հազար ութ հարյուր իննսուն երկու
14	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	Очистка форсунок инжектора	6,228	վեց հազար երկու հարյուր քսանութ	7,785	յոթ հազար յոթ հարյուր ութսունհինգ
15	Բենզամոմի փոխարինում	Замена бензонасоса	6,726	վեց հազար յոթ հարյուր քսանվեց	7,785	յոթ հազար յոթ հարյուր ութսունհինգ
16	Վառելիքի զտիչի փոխարինում	Замена топливного фильтра	6,726	վեց հազար յոթ հարյուր քսանվեց	2,335	երկու հազար երեք հարյուր երեսունհինգ
	<i>Ստեղծման և արտաձման համակարգ</i>	<i>Система управления, подачи и смазки</i>				
17	Հովհարի փոկի հանում և տեղադրում	Снятие и установка ремня вентилятора	2,522	երկու հազար հինգ հարյուր քսաներկու	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
18	Հովհարի հանում և տեղադրում	Снятие и установка вентилятора	4,204	չորս հազար երկու հարյուր չորս	6,726	վեց հազար յոթ հարյուր քսանվեց
19	Ռադիատորի հանում և տեղադրում	Снятие и установка радиатора	8,408	ութ հազար չորս հարյուր ութ	8,408	ութ հազար չորս հարյուր ութ
20	Թերմոստատի փոխարինում	Замена термостата	2,522	երկու հազար հինգ հարյուր քսաներկու	8,408	ութ հազար չորս հարյուր ութ
21	Ջրի պոմպի փոխարինում	Замена водяной помпы	5,045	հինգ հազար քառասունհինգ	12,611	տասներկու հազար վեց հարյուր տասնմեկ
22	Ընդարձակող բաքի փոխարինում	Замена расширительного бака	841	ութ հարյուր քառասունմեկ	3,363	երեք հազար երեք հարյուր վաթսուներեք
23	Խլարարի հանում և տեղադրում	Снятие и установка глушителя	2,522	երկու հազար հինգ հարյուր քսաներկու	3,363	երեք հազար երեք հարյուր վաթսուներեք
24	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	Снятие и установка шланга радиатора	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու	1,682	մի հազար վեց հարյուր ութսուներկու
	<i>Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</i>					
25	Վշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена рабочего или главного цилиндра	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու	5,885	հինգ հազար ութ հարյուր ութսունհինգ
26	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	Замена дисков и подшипника сцепления	841	ութ հարյուր քառասունմեկ	841	ութ հարյուր քառասունմեկ
27	ՓՏ-ի հանում և տեղադրում	Снятие и установка КП	12,611	տասներկու հազար վեց հարյուր տասնմեկ	25,223	քսանհինգ հազար երկու հարյուր քսաներեք
28	ՓՏ-ի վերանորոգում	Ремонт КП	8,408	ութ հազար չորս հարյուր ութ	62,279	վաթսուն երկու հազար երկու հարյուր յոթանասունհինգ
	<i>Բաշխիչ փոսի, կարդանային լիսեռ</i>	<i>Система охлаждения и выпуска</i>				
29	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	Снятие и установка карданного вала	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու	6,726	վեց հազար յոթ հարյուր քսանվեց
30	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	Снятие и установка крестовины карданного вала	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու
	<i>Առջևի և հետևի կամրջակներ</i>	<i>Передние и задние мосты</i>				
31	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	Снятие и установка переднего или заднего мостика	12,611	տասներկու հազար վեց հարյուր տասնմեկ	16,815	տասնվեց հազար ութ հարյուր տասնհինգ
32	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	Полная разборка и сборка переднего или заднего мостика	8,408	ութ հազար չորս հարյուր ութ	25,223	քսանհինգ հազար երկու հարյուր քսաներեք
33	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասնու հանում և տեղադրում	Снятие и установка полуоси переднего или заднего мостика	2,102	երկու հազար հարյուր երկու	4,204	չորս հազար երկու հարյուր չորս

Հ/Հ	Ծառայության տեսակներ	Тип услуги	Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Մ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ			
			4x4 տիպի Շերոլե-Լիվա		BMW 523i	
			Թվերով / ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ	Տառերով	Թվերով / ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ	Տառերով
34	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	Замена подшипника полуоси	841	ութ հարյուր քառասունմեկ	841	ութ հարյուր քառասունմեկ
	<i>Կախոց</i>					
35	Տրավերսի հանում և տեղադրում	Снятие и установка траверса	6,726	վեց հազար յոթ հարյուր քսանվեց	16,815	տասնվեց հազար ութ հարյուր տասնհինգ
36	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում	Снятие и установка левого или правого крепления	5,045	հինգ հազար քառասունհինգ	5,045	հինգ հազար քառասունհինգ
37	Անվակունդի առանցքակալի փոխարինում	Замена подшипников ступицы	2,943	երկու հազար ինը հարյուր քառասուներեք	2,943	երկու հազար ինը հարյուր քառասուներեք
38	Անվակունդի հանում և տեղադրում	Снятие и установка ступицы	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու	8,408	ութ հազար չորս հարյուր ութ
39	Ձսպանակի հանում և տեղադրում	Снятие и установка пружины	2,522	երկու հազար հինգ հարյուր քսաներկու	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
40	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	Снятие и установка переднего амортизатора	1,261	հազար երկու հարյուր վաթսունմեկ	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
41	Ներքևի լծակի հանում և տեղադրում	Снятие и установка внутреннего рычага	3,363	երեք հազար երեք հարյուր վաթսուներեք	5,045	հինգ հազար քառասունհինգ
42	Ներքևի լծակի վռանների փոխարինում	Замена втулок нижнего рычага	841	ութ հարյուր քառասունմեկ	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու
43	Հետևի մետաղաձողի վռանի փոխարինում	Замена втулок заднего штанги	10,000	տասը հազար	16,000	տասնվեց հազար
44	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	Снятие и установка правых или левых тяг	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
45	Միջին ձգանի հանում և տեղադրում	Снятие и установка средней тяги	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
46	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	Снятие и установка поворотного рычага	1,261	մեկ հազար երկու հարյուր վաթսունմեկ	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
47	Վերևի լծակի հանում և տեղադրում	Снятие и установка верхнего рычага	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
48	Վերևի լծակի վռանների փոխարինում	Замена втулок верхнего рычага	841	ութ հարյուր քառասունմեկ	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու
49	Գնդե հողակալների փոխարինում	Замена сферических креплений	1,261	հազար երկու հարյուր վաթսունմեկ	4,204	չորս հազար երկու հարյուր չորս
50	Ծայրակների հանում և տեղադրում	Снятие и установка наконечников	841	ութ հարյուր քառասունմեկ	3,363	երեք հազար երեք հարյուր վաթսուներեք
51	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	Снятие и установка втулок переднего стабилизатора	1,682	մեկ հազար վեց հարյուր ութսուներկու	5,045	հինգ հազար քառասունչորս
52	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	Замена втулок переднего стабилизатора	841	ութ հարյուր քառասունմեկ	3,363	երեք հազար երեք հարյուր վաթսուներեք
53	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	Снятие и установка заднего амортизатора	1,261	հազար երկու հարյուր վաթսունմեկ	5,885	հինգ հազար ութ հարյուր ութսունհինգ
54	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	Снятие и установка задней балки	841	ութ հարյուր քառասունմեկ	3,363	երեք հազար երեք հարյուր վաթսուներեք
55	Անվաբացքի կարագավորում	Регулировка развала/схождения	5,045	հինգ հազար քառասունհինգ	10,089	տասը հազար ութսունիւնը
	<i>Ղեկային մեխանիզմ</i>					
